# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Հույս-Մոտոր ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 6 | ZMAX / Aplus | Zodo TIRE Co., LTD / Shandong Haohua Tire | ԱՄԱՌԱՅԻՆ ՕԴԱՃՆՇԱԿԱՆ ԱՆՎԱԴՈՂԵՐ** Ամառային օդաճնշական անվադողերը նախատեսված են ավտոմեքենաների անվտանգ և արդյունավետ շահագործման համար ամառային եղանակային պայմաններում (բարձր և միջին ջերմաստիճան, չոր և թաց ճանապարհածածկ): Անվադողը պետք է ունենա վավեր համապատասխանության սերտիֆիկատ, որը հաստատում է դրա համապատասխանությունը գործող նորմատիվ պահանջներին: Անվադողը պետք է լիովին համապատասխանի ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1558 որոշմամբ հաստատված «Օդաճնշական անվադողերի տեխնիկական կանոնակարգի» պահանջներին: Արտադրության տարեթիվը պետք է լինի ոչ շուտ, քան 2025 թվականի չորրորդ եռամսյակը: Անվադողը պետք է լինի նոր, չօգտագործված, առանց որևէ վերանորոգման, վերամշակման կամ մեխանիկական վնասվածքների հետքերի: Ամառային անվադողը պետք է ունենա ամառային շահագործման համար նախատեսված հատուկ ռելիեֆային նախշ (պրոտեկտոր), որը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ապահովում է բարձր կպչողականություն և կայունություն ինչպես չոր, այնպես էլ թաց ճանապարհածածկի վրա, ինչպես նաև արդյունավետ ջրահեռացում թաց երթևեկության պայմաններում: Ռետինային խառնուրդը պետք է ապահովի բարձր դիմադրություն բարձր ջերմաստիճանների նկատմամբ, պահպանելով անվադողի ձևը, կպչողականությունն ու շահագործման արդյունավետությունը երկարատև օգտագործման ընթացքում: Անվադողի շերտային կառուցվածքը պետք է ապահովի բարձր դիմացկունություն, մաշակայունություն և ծանրաբեռնվածության նկատմամբ կայունություն, ինչպես նաև անվտանգ երթևեկություն: Անվադողը պետք է ապահովի կայունություն, լավ կառավարելիություն և կարճ արգելակման ճանապարհ ինչպես չոր, այնպես էլ թաց ճանապարհային պայմաններում:Երաշխիքային ժամկետ 12 ամիս ստացման օրվանից:Բեռնաթափում և տեղափոխում պահեստ Մատակարարը պարտավորվում է ապրանքի մատակարարումն իրականացնել Պատվիրատուի կողմից նշված հասցեով և սեփական ուժերով ու միջոցներով ապահովել ապրանքի բեռնաթափումը, տեղափոխումը և տեղաբաշխումը (դասավորումը) Պատվիրատուի կողմից սահմանված համապատասխան պահեստում/պահեստային տարածքում: Ապրանքի հանձնումը չի համարվում կատարված միայն մուտքի մոտ կամ բակի տարածքում բեռնաթափելու դեպքում. ապրանքը պետք է հանձնվի պահեստում՝ ամբողջ ծավալով, առանց լրացուցիչ ծախսերի Պատվիրատուի համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО УЙС-МОТОР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 6 | | | |